



ԲԵՐՈՅԵԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԵԿԱՆ, ԱՐՈՒԵՏՏԻՑԻՑԵԿԱՆ

<p>Ժ Բ. ՏԱՐԻ 1898</p>	<p>Տարեկան 10 Ֆր. ամի — 4 րբ.: Ղեցումնայ 6 Ֆր. ամի — 2 րբ. 50 Կ.: Մշի թիս. կ'արժէ 1 Ֆր. — 50 Կ.:</p>	<p>ԹԻՂ 7, ՅՈՒՆԻՍ</p>
------------------------------	--	-----------------------------

Ո Ր Մ Ո Ր Մ Ե Ջ Ե Ն

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ՓԵՐՈՅՈՍ ԲԻՂՆԵՂՆԵՐ ԵՒ ԻՐ ՊԵՏԱՐԻՑԵՆ

ԽՐԴՈՒԹՂԸ

(Ըոր. — ի — ի — ի — ի — Վր.)



յժժ գառանք վարգառի թագաւորութեանը: Պապի տմարդի սպանութիւնը աստիկ գըրգռեց Տայ իշխաններին Հոռոյեցոց դէմ: Դորքա այդ պատճառով Մու-

շիղ Մամիկոնեանի ձեռնբրիցութեամբ մի ծածուկ ժողով կազմեցին եւ խորհուրդ ալին, թէ արդեօք իրենց թագաւորի մահուան համար Հոռոյեցիներին զլէժ առնին թէ ոչ: Եւ ապա հաստատեցաւ այս բան ի խորհրդեանն, եւ ասնն. Ոչ կարեմբ հեթանոսացի Պարսկացի ծառայութիւն մտանել, եւ թշնամի առնել զթագաւորն:

Յունաց, եւ ոչ զերկոսեան թշնամի առնել, եւ ոչ առանց միոյ թիկանց կարեմբ կեալ: Ապա եկաց այս բան ի խորհրդին, թէ զինչ եղև՝ ահա եղև, թող ծառայեսցուք թագաւորին Յունաց: Սորանից յետոյ շուտով վարաւզ դասը վաղէս կայսեր հրամանով հէնց Պապի սպանութեան տարին (374 թ.) Հայաստան գալով, թագաւորեց Պապի տեղ: Որ նա վաղէս կայսեր ձեռքում գործի եւ հլու հրամանակատար հանդիսացաւ, այդ շատ հասկանալի է: Ոչ պակաս հոռոյեանք հանդիսացաւ նաեւ նոր թագաւորի առաջին խորհրդակները, Մուշեղ Մամիկոնեանը, Հայոց սպարապետը, որը հոռոյեան սպանների միջոցաւ բանակցելով վաղէս կայսեր հետ, աշխատում էր նորան համոզել, որ նա Հայաստանի բոլոր գաւառներում նոր ամրոցներ կառուցանել տայ, հայ ազատներին կայսերական թռչակով զինուորէ, եւ այսպիսով Հայաստանը Շապուհի յարձակումների համար անմատչելի դարձնէ. եւ կայսրը խոստանում էր այս բոլորն էլ կատարել:¹

Որ Շապուհ երկայնակեացը չէր կարող դէպ ի այս բոլորն անտարբեր գտնուել, այդ շատ հասկանալի է: Եւ ահա հէնց Պապի սպանութեան տարին վաղէս կայսեր մտապատմաւորներ ուղարկելով, նոր պայմաններ էր առաջարկում նորան, որոնցով ուղում էր իւր իշխանութիւնը Հայաստանում վերականգնել:

1 Փառաստ, Ե՛ 14:
 2 Փառաստ, 14:

“Իսկ Սապորը, գրում է Ամմիանոսը,¹ իբր զզրիք առաջուպ պարտութիւնից յետոյ լսելով Պարայի (Պապի) մահը, որին չափազանց աշխատում էր իբր գանձակիցը դարձնել, խորը խորոցեցաւ, բայց մեր զզրիք պատճառութիւնից սկիսածելով, մեծ նախապատրաստութիւններ էր տեսնում. Արարային իրբև պատգամաւոր կայսեր մտ ուղարկելով, յորդորում էր՝ Հայաստանն իրբև պատճառ անընդհատ աղէտներէ կատարելապէս ունչացնել: Իսկ եթէ այս անհաճոյ երևաւ, ուրիշ բան էր պահանջում, որ Իվերիայի [Վրաստանի] բաժանումը վերանայ, այստեղից Տանուին հռոմէական պահապան զորքերը եւ թոյլ տրուի Ապակուրէսին միահնձան թագաւորելու, որին ինքը [Վրաց] ազգի վերայ իշխանաւոր էր կարգել:” Բայց Վաղէս կայսրն իրեն զօրեղ զգալով, բացէ ի բաց մերժեց Հապուհի այս պահանջները: “Այս բոլորին, շարունակում է Ամմիանոսը,² Վաղէսը պատասխանեց այն մտքով, որ ինքը չէ կարող ոչինչ նուազեցնել այն պայմաններից, որ փոխադարձական համաձայնութեամբ հաստատուեցան, այլ կը պաշտպանէ նոցա մեծ եռանդով:”

Բայց Հապուհը սորանով չբաւականացաւ: Կա նորից Վաղէսի մտ թուղթ եւ պատգամաւորու ուղարկելով, սպառնական ոճով յայտնում էր, որ Յովհաննոսի ժամանակ կուած դաշինքը (“Հանդէս, 1897, եր. 86) խախտուած է, եւ երկու տէրութեանց մէջ տիրող տարածայնութեանց վերջ տալու համար հարկ է որ այդ դաշինքի վկաներից նոցա՝ որոնք դեռ եւս կենդանի են, Պարսկաստան գնան եւ իր արքունիքի հետ բանակցին, “որովհետեւ գիտէր,՝ աւելացնում է Ամմիանոսը, “որ ոմանք արդէն վախճանուել են:” Գաթրճեանն ուղղել է նկատել,³ որ Հապուհն այս բոլորն անելով ուղում էր ժամանակ չափել եւ պատրաստվի պատրաստուել: Վաղէս կայսրը Հապուհի պահանջը կատարելով, Պարսկաստանն ուղարկեց Վիկտոր Տեծերազօրքի հրամանատարին (magister equitum) եւ Ուրբիցիոս Միջագետքի զորավարին (dux Mesopotamiae), որոնց պատուիրել էր Հապուհին չափաւորութեան հրաւիրել եւ ասել, որ նա խոստանալով չափաւոր լինել, այնուամենայնիւ հակառակ իբր խոստման ուղում է Հայաստանը նուաճել անիրաւ կերպով եւ Հայերին թոյլ չէ տալն, որ իրենց օրէնքներով եւ

սահմանադրութեամբ կառավարուին: Միեւնոյն ժամանակ կայսրն աւելացնում էր, որ ինքը չէ կարող Սաւրոմացէսին, այն ժամանակուպ Վրաստանի թագաւորին, որ Հռոմայեցեաց կողմնակիցն էր, առանց պաշտպանութեան թողնել, եթէ այդ հարկը պահանջէ: Բայց կայսրը պատգամաւորներն անարժան գտնուեցան: Կոնստանդինոսը Հապուհին պաշտպանութեան համար Հապուհից կաշառուած, նորա բոլոր պահանջներին ստիպարը հնարաւորեցանք, մինչեւ անգամ յաւակնութիւն ունեցան առանց կայսրըը հարցնելու. Հայաստանի բաժանման համար Հապուհի հետ բանակցել, եւ Հապուհը ճարպկութեամբ կարողացաւ նոցա համոզել, որ Հայաստանի մի քանի գաւառները անցնի Հռոմայեցեաց իշխանութեան ներքոյ այն պայմանով, որ կայսրը Հայաստանի միւս մասի եւ Վրաստանի գործերում այլ եւս չխառնուի: Վաղէս կայսրը պատգամաւորները հէնց նոր էին վերագարձել, երբ նոցա յետեւից եկաւ եւ կայսրըը ներկայացաւ Հապուհի պատգամաւորը Սուրեն, որ Պարսից տէրութեան մէջ երկրորդ անձն էր համարուում (Suren adestatis secundae post regem), “մատուցանելով կայսրըը [Հայաստանի] այն գաւառները, որ մեր պատգամաւորները յաւակնել էին ստանալու:”²

Սակայն Վաղէսը Սուրենին սիրով եւ առատաձեռութեամբ ընդունելով, միեւնոյն ժամանակ յայտնեց որ իբր պատգամաւորները սխալուել են, եւ ինքը երբեք արամադիր չէ Հայաստանն եւ Վրաստանը Պարսից տէրութեանը թողնելու, այլ զէնքով կը պաշտպանէ իբր իրաւունքները: Այս պատգամաւորութիւնն եղաւ ձմեռը 375 թուին, եւ Վաղէսն արդէն պատրաստութիւններ էր տեսնում՝ գարնանը բացուելուն պէս երեք զորագնդերով Պարսից վերայ արշաւելու:՝³ Այս բոլորը լսելով Հապուհը, “սրտմոեցաւ, պատուելք տուեց Սուրենին, որպէս զի այն ամեն, ինչ որ յանձն էին առել Վիկտոր գուքան եւ Ուրբիցիոսը, սրով յետ նուաճեր, եթէ մէկը համարձակուէր ընդդիմանալ, եւ Սաւրոմացէսի պաշտպանութեան համար նշանակուած զօրքին խոստութեամբ հաւածէր: Եւ այս ամենը՝ ինչ որ վճուել էր, իրագործեց շուտով, առանց ընդդիմադրութեան կամ վեժմիկութեան հանդիպելու, որովհետեւ Հռոմայեցեաց տէրութեանը ուրիշ վտանգ էր սպառնում. Գոթների վտանգը, որոնք ան-

1 Ammianus Marc., Rerum gestarum, l. XXX, 2.
 2 Ammianus Marc., ibid.
 3 Զեղեբակյան Պատմ. Բ., 513:

1 Ammianus Marc., Rerum gestarum l. RXX, 2, 2.
 2 Ammianus Marc., ibid., XXX, 2, 2.
 3 Ammianus Marc., Rerum gestarum, l. XXX, 2:

զուսպ յարձակումներով հեղեղում էին Թրակիանս՝¹ Ապա նոյն պատմագիրը պատմում է,² որ Աղադեթ Գոթներին յառաջացած ծանր ճգնաժամը պատճառով ստիպուած լինելով իւր լեզգեանները Հայաստանից հանել, շտապով վերջոյշեալ Ախիտորին նորից Շապուհի մօտ ուղարկեց, „ut super Armeniae statu pro captu rerum componeret independentium,³ եւ աւելացնում է, որ 376 թուին Տրայանոս կայսեր հրամանով Հայաստանից հռոմեական լեզգեանները հանելով, արշաւեց Թրակիա Գոթներին դէմ:

Արդ թէպէս Ամմիանոս այլ եւս չէ ասում, թէ Ախիտորի բանակցութիւնները Շապուհի հետ ինչ հետեւածները ունեցան, բայց շատ հեշտ է հասկանալ, որ այս 376 թուին կուած դաշն Հռոմայեցոց համար ոչ պակաս անպատուաբեր էր քան այն խայտառակ դաշն, որ կուեցաւ 363 թուին: Այս անգամ եւս բախտն արբայից արբայի՞ն օգնութեան հասաւ, եւ նա վաղէտի նեղ վիճակից օգուտ քաղելով, Հայաստանը, որ 7 տարի (369—376) շարունակ Հռոմայեցոց գերիշխանութեան տակ էր եղել, նորից առաւ իւր գերիշխանութեան տակ:

Գրանալով Փաւստոս Իրիզանդացուն, տեսնում ենք, որ նա կէս աւ կէս հաստատում է Ամմիանոսի պատմածը: Բայց ի սորանից մենք այստեղ ծանօթանում ենք պատմագրի ճաշակի եւ պատմութեան գրելու եղանակի հետ. այն ինչոր արդիւնք է եղել Հռոմայեցոց եւ Պարսից քաղաքակաւութեան եւ միջմտութեան, Փաւստոսը վերաբերում է Հայերին, իբր թէ ամեն բան Հայերն ինէին կատարած առանց արտաքին միջամտութեան: Փաւստոսը Ամմիանոսին համաձայն պատմում է, ինչպէս տեսանք, որ Պապի Տակասը Մանուէլ Մամիկոնեանն է որ Մուշեղ սպարապետի մահուան վրէժխնդրութեամբ լքուած՝ Պարսկաստանից Հայաստան է գալիս, «նախ առանց հրամանի թագաւորին Արարզգաստ, յինքն յափշտակեց զգործավարութեան սպարապետութիւն», ապա հայաժողով է հենց իրան Արարզգաստին, «եւ զկինն Պապայ արքայի զԶարմանդուխտ տիկին, հանդերձ որդւովք Արշակունւովք [Արշակաւ եւ Արարշակաւ]

առեալ զնոսա ի տեղի թագաւորի կառեալ ի պատիւ շրջեցոցանէր, մեծաւ իմաստութեամբ եւ բազում յոյժով թեմաք աշխարհին Հայոց մեծապէս առաջնորդէր,¹ Եւ երբ որ Մանուէլը տեսնում է, որ «զոր ինչ գործեացն ընդդէմ էր հրամանաց թագաւորին Յուճաց», Զարմանդուխտ թագաւորն հետ հպատակութեան թուղթ է գրում եւ պատգամաւորներ է ուղարկում՝ «առ թագաւորն Պարսից», եւ «զՄուրէն պարսիկ մի ի ճոխ նախարարացն [Պարսից թագաւորի], Հայաստան բերելով, Հայաստանը նորա ձեռքն է տալիս:² Մարդ զարմանում է, թէ ինչպէս կարող էր մի Մանուէլ, որչափ անհեղբ. եւ նա լինէր, Արարզգաստ թագաւորին, որ թագաւորում էր Հայաստանում Առդէս կայսեր հրամանով, հալածել, Հայաստանին այնպէս հնչուութեամբ տիրել եւ այլն: Արդ Ամմիանոսի պատմութեան ընթացքից երեւում է, որ Մանուէլն այս բոլորն արել է ոչ թէ ինքնուրուի, այլ Շապուհ հզօր թագաւորի գաղտնի եւ յայտնի օգնութեամբ: Իսկ սոգգային անպարծուութեամբ տոգորուած Փաւստոսն այս բոլորը վերաբրել է Մամիկոնեան տան հերոսին:

Այս բոլորից հետեւում է, որ Արարզգաստ թագաւորում էր 374—376 թ., հաջել 3 տարի, եւ ոչ թէ 390—403 թ., ինչպէս ասում է Խորենացին: Մնում է բաց 377—383 ժամանակամիջոցը, որը Մուրէն պարսկի մարդպետութեան եւ Մանուէլ Մամիկոնեանի ազգապետութեան ժամանակամիջոցն է, որոնց մասին Փաւստոսը պատմում է Գլուր. Եւ զԼ. ԼԵ—ԽԶ: Եւ որովհետեւ Հայաստանի բաժանման թուականը միեւնոյն ժամանակ եւ Խոսրովի՝ Առամշապուհի եղբօր, Թագաւորութեան առաջին տարին է, ուրեմն Խոսրովը թագաւորում էր 384—389 թուականը, ուրեմն մօտ 5 տարի, ինչպէս ունի Խորենացին (միայն ոչ թէ 408—413 թուականը):

Կաթողիկոսների ժամանակագրութեանը գալով, վերջինս նկատել հետեւեալը: Բարսեղ Կեծը, Աթարիոյ Հայրապետը 372 թուին մի թուղթ է գրել արեւմտեան եպիսկոպոսներին, որի մէջ արեւելեան եպիսկոպոսներին հետ յիշում է նաեւ մի Եուսիկի (Ιουσακη):³ Հետեւեալս է, որ այն Եուսիկը այն Եուսիկ Աղբիւնոսեանն է, որ այն Պապը Ներսիսի տեղ նշանակեց: Կիեւոյն ժամանակ Ներսէս Կեծը «յա-

1 Ammianus Marc., ibid, XXX, 2, 7-8.
2 Ammianus Marc., ibid, XXXI, 7, 1-2.

1 Փաւստոս, Եւ լէ:
2 Փաւստոս, Եւ լէ:
3 Marquart, Zur Kritik des Faustus, p. 224-

նուանէն յիշատակուում է այն 32 եպիսկոպոսների թուում, որոնք Բարսեղի ժամանակ 371 կամ 372 թուին կեսարայում ժողովուեցան:՝ Սորանից հետեւում է, որ Կերսէս Մեծի մահէն եւ Յուսիկի գահակալութիւնը տեղի ունեցաւ 372 թուին. բայց Փաւստոսն այլ եւս չէ պատմում, որ այս Յուսիկը քանի տարի կաթողիկոսեց: Այնուհետեւ Փաւստոսից (Դպր. 2, ք) տեղեկանում ենք, որ Յուսիկի յաջորդը Ջաւեն կաթողիկոսել է 3 տարի, եւ (Դպր. 2, ք) Շահակ կործանեց կաթողիկոսել է 2 տարի: Արեմն 16ամեայ ժամանակամիջոցից, որ անցաւ Կերսէս Մեծի մահէից մինչեւ նորա որդու գահակալութիւնը (372—388), հասնելով 5 տարի, կը մնայ 11 տարի, որ պէտք է բաժանել Յուսիկ Բ. ի եւ Ապուրազիսի մէջ:

Այսպէս ուրեմն խորենացու ժամանակագրութիւնը կեղծ եւ հակապատմական է, եւ խորենացին ո՛չ միայն հակասում է Ամմիանոսին, այլ եւ կորեան, Ղազար Փարպեցուն եւ Եղիշէին, որի խօսքով բոլոր հաւատարիմ պատմագիրներն: Ա՛յժմ անցնինք խորենացու պատմութեան բովանդակութեանը: Ինչպէս Փաւստոսը, այնպէս էլ խորենացին Պապի մահէից յետոյ պատմում է Վարազդատի թագաւորութիւնը, միայն թէ խորենացին բաց է թողել Տայ նախարարների ծածուկ խորհրդակցութիւնը: Մուշեղ Մամիկոնեանի նախաձեռնութեամբ՝ Պապի սպանութեան վերաբերմամբ, որովհետեւ նա Պապի սպանութեան պատմութիւնն այնպիսի փոփոխութեանց էր ենթարկել, որ այս խորհրդակցութիւնն աւելորդ է անտեսել պէտք է երեւար եթէ յիշէր, Բայց որ խորենացին Վարազդատի պատմութիւնը Փաւստոսից է առել, այդ հրեւում է նաեւ բառացի նմանութիւններէց:

Փաւստոս, Ե, 1ք-1է: Յուսիկը իբրեւորեւնի Վարազդատի... «Եւ եղև իսկ մահան Պապայ թագաւորն Հայոց, իբրև իտայ թագաւորն Յունաց Վարազդատ զի ի վրայ աշխարհին Հայոց:

Եւ եր նա շահակուում էր, իբրև իտայ խորի մեռաք: Գեորգի, ի մնաց թէ թէ եւ, մանգարայ տղաւ յաւանար, մանկամու... Առաւել ունին զնր մանս:

Խորենաց, Գ, 1: Յուսիկը իբրևորեւնի Վարազդատի... «Բայց Աւգոստոս բարեացապարտն թէպէս... իբրև իտայ Հայոց փոխակալ Պապայ Վարազդատ զի ի վրայ աշխարհին Արեւմտայ:

Այս Վարազդատ էր որով շահակ, որեւոյ, անուանեց, ուստից յի ամենայն զորովք պարսկան եւ յայժ իրկի նեամագու... Եւ յայժ իրկի Յունաց որոյ թեամբ որոյ

կայն՝ որ ի տից հասարակեց էին նորա, առուել քան զԵրեցոյ իմաստնց, որք կարող էին զօրակար իբրև մատուցանել նմա: արեւայ ի մանկութեանն արու թիւն, առ պարզեք քան թագաւորութեանն, ոչ ճապաղաբ իբրև վերակալութեան զորացն Յունաց:՝

Սակայն երկու պատմագիրների մէջ եւրեւացող տարբերութիւնների էլ մեծ են: Ըստ Փաւստոսի Վարազդատի անկումն լինում է հետեւեալ կերպով. Վարազդատը շուտով խաղաղք է դառնում իւր նախարարների ձեռքում եւ լսելով իւր զայեակ բառ Սահաւունու, Մուշեղ Մամիկոնեանի, Հայոց սպարապետ, անձնական թիշնամուն, սպանել է տալիս սպարապետին այն եղանակով, ինչ եղանակով Հուսիկը սպանեցին Պապ թագաւորին:՝ Այն ժամանակ Մանուէլ եւ Կոմս Մամիկոնեան եղբայրները, որոնք երկու տարիներ Շապուհ արքայից արքայի զօրաբանակում ծառայել էին եւ մեծ քաջագործութիւններ էին արել, գալիս են Հայաստան, Մուշեղի մահուան համար Վարազդատից զրեժ առնելու: Իւ այս Մամիկոնելին յաջողութեամբ Հեշտութեամբ: Կա նախ առանց Վարազդատին հարցնելու դառնում է Մամիկոնեան տան Նահապետը, որպայից տալիս թագաւորութիւնն եւ կարծոյ դաշտում յաղթելով Վարազդատին, վնասում է Հայաստանից եւ կառավարութեան ղեկն իւր ձեռքն է առնում:՝ Արդէն վերեւ ասացինք, որ այս բոլորն եղել է Շապուհ արքայից արքայի օգնութեամբ եւ ցանկութեամբ, որ Փաւստոսը վերագրում է միայն Մանուէլին: Իսկ խորենացին, Մամիկոնեան տան երդուեալ լինումին, Մանուէլին անունն եւ գործունեութիւնը բոլորովն լուռութեան մատնելով, Վարազդատի անկումն վերագրում է Թէոդոս կայսեր: Մենք արդէն տեսնք, որ Վարազդատի եւ Թէոդոս Մեծի ժամանակակցութիւնը մի անմիտ զրոյց է: Իբրև է, որ Վարազդատը «Հողաւ գնաց ի յերկիրն Յունաց, անդ եկաց որպպի եւ եկեաց, եւ անկին մեռաւ»,՝ բայց նա գնաց ո՛չ թէ իւր

5 քաղեր են յարձակուում, բայց նա նոցա միւսանց յետեւից, հաւերի նման սուսեթաշար է ունում. մի ինչը բերել վերայ յարձակուելով, նորա պարսկի վերայ կանգնած 17 մարտիկն նուտահար անելով, Կի վերջ հունաց միւսանց զինի, իբր ի սաստիկ ինն մրդի վաղահասուկ թ թեմաց, աւազների յետեւից այնպէս է վաղում, որ նորա զինուկն լինելով, զալիս եւ աննասուր են իրում Վարազդատին եւ այլն: Սեյք էր տեսանել նոր զոմ Երեմիէս ընդ Արմանագրոս գետ վաղելով, խորենացին ընդօրինակել է կեղծ կալութեանս, անհ «Հանգէտ 1891 սպրիլ, եր. 104:

1 Գաթիճըմեան, Յիւզեղական Պատմ. Բ, 511:
 2 Այստեղ առասպելաբեր խորենացին Փաւստոսի պատմութեւ Վարազդատի քաղութեան մասին՝ անտեղի առաւելներով ծանրաբնուում է Վարազդատը օր յերեկով աւել ծներ է կտորում. Ղաւնկարտաց ազգից նորա վերայ

1 Փաւստոս, Ե, 1է:
 2 Փաւստոս, Ե, 1է:
 3 Փաւստոս, անգ:

ազատ կամքով թեոդոսի մօտ, այլ Շապուհից եւ Մանուկից հալածուելով՝ իրեն թագաւորեցնող Վաղէսի մօտ: Խորենացու պատմութեան այս գլխում բաց ի միւս ժամանակագրական մտորութիւններէ, որոնք մասին արդէն իստեղծեք, ուրիշ թանչ պարունակուում: Միայն նկատենք, որ այն ինչ որ Փաւստոսը (Եւր. 19.) սպանուած Մուշեղ Մամիկոնեանի դիակի համար պատմում է, Խորենացին գողացել եւ յարմարեցրել է երեւակայական Արա գեղեցիկի դիակի վերայ (Խոր. Ա, ԺԵ): Այն այդ երկու պատմութեանց բառացի նմանութիւնները:

Փ—

Խորենացի:

[Վնասնէք Մուշեղի] աւելին, Գորգոս յանձնեալ մահաւ մտեալ էր, եւ վեր երթէ չէր առեալ... Իսկ կէտք յառեցէր, ուր մտնէ նմա... հանին ետքն ի սուրբն աշտարակի մոյց, ուր թէ Փան զի այդ քաղ էր, Աւետիսի եւ յարուցանեն զգաս: Պահագաս կային իս — սակն յարուցանէր ինչպէս ինչպէս յարուցանէր: Այս ինչպէս յարուցանէր անտի եւ լայն թաղեցին զնա որպէս օրէն էր:

[Շապուհ] հրամայէ զնա զնա (80, զԱրա) է վերադառնալ ապարանից... Եւ շարունակեց աստուածոցն ինչ զնա — զնա նորա: Եւ կենդանացին: Միւսագասայն իս — սակն գիւթու թեմայի զհարուցանելու իստեղծեան իստեղծեան յարուցանելու զնա: Եւ ինչ ինչ մտնեաց ընկնուել ի վիճմեծ եւ ծածկել... համբաւէ զնաննէ այսպէս լեզու աստուածոցն զԱրա եւ ինչպէս յարուցանէր:

Այնուհետեւ Խորենացին Մամիկոնեան տան դիւցազն Մանուկէն սիրազորութիւնները, ինչպէս Սուրեն պարսիկ զօրավարին հալածելը, միւս պարսիկ զօրավարներին յարթելը, նորա փառաւոր ազգապետութիւնը եւ Դամեայ խաղաղութիւնը, որ պատմում է Փաւստոս, (Գպր. եւ, 12—13) լուսութեան տալով եւ Միհրուստիան Արծրուհու սպանութիւնն էլ կեղծելով («Հանդէս», 1898. եր. 8), հետեւեալ գլխում (Գ, խա) այլալուսում է Արշակի եւ Վաղարշակի թագաւորութեան պատմութիւնը: Փաւստոս, (Եւ, իւր) պատմում է, որ Մանուկէ Մամիկոնեան սպարապետը ընտելութեամբ պարսիկ յարձակումները յետ մղելով եւ Միհրուստիանն էլ սպանելով, «Տայր զգուստը իւր Վարդանդուխտ կին Արշակայ մանկանն Արշակունցն եւ փեսայ իւր անէր զնա: Անէր հարսանիս եւ եղջօր նորին Վաղարշակայ, եւ ապր նմա զգուստը ասպետին Բագրատունց ի Սպեր գաւառէ, որ թագաւորին թագակապքն լեալ էին ի բնէ ազգին թագաւորութեանն Արշակունցն. եւ մեծապէս արարեալ հարսանիսն ամենայն երկիրն Հայոց, ցնծացեալ ինչպէս ալք էին ընդ մեծ ինչութիւն ուրախութեան: Ապա յետ այսորիկ զարձակել ի մի վայր ժողովեալ զաշխարհ ամե-

նայն զմարդիկ երկիրն Հայոց, եւ թագաւորեցոյց զմանուկն զԱրշակ երկիրն Հայոց եւ զՎաղարշակ երկրորդ նմին: Եւ ընդ այն եւս ցնծացեալ անունին մեծապէս ուրախութիւնն եւ ցնծութիւնն ամենայն երկիրն Հայոց: Ապա յետ այսորիկ հիւանդացաւ սպարապետն զօրավարն Հայոց Մանուկէ զախա հիւանդութեան մահուան,» եւ պատմում է Մանուկէի մահը: Մամիկոնեան տան ամենամահ հերոսը մահուան անկողնում ողբում է, որ իրեն չվիճակուեցաւ մեռնել գոռ պատերազմի զառուում հայրենիքի եւ եկեղեցու փառքի համար, այլ «զօրէն աւնանոյ» մեռնում է «զվառթար մահ մահճաց», Արդ հարկաւոր է անել, որ Բագրատունեաց տան սարկաւոր պատմագիրը ոչ մի կերպ չէր կարող յիշել Մամիկոնեան նման այս փառքը: Եւ ահա նա Մանուկէի գերը խելով, բաժանում է թեոդոս Մեծի, երեւակայական Սահակ սպայտի եւ Բաբելէն Սիւնեաց նահապետի մէջ, թեոդոսի յատկացնելով Պայտի որդկերաց թագաւորեցնելու, Բաբելէն Սիւնուս, որը Մանուկէի նիղակակիցն էր: Արշակի աներութեան, իսկ Սահակ սպայտին՝ Մանուկէի մահուան դերը: «Ապա փոխանակ Վարազդատայ», ասում է Խորենացին, «թագաւորեցոյց Հայոց թեոդոս Մեծ զերկուս որդին Պայտի զԱրշակ եւ զՎաղարշակ... Ար իկն կայալ զաշխարհս, եւ սիրեցին սմա արխաբար մարտիք ընդ Պարսս: Եւ առին իւրեանց կանայս՝ Արշակ զգուստը Բաբելէն Սիւնեաց նահապետի, եւ Վաղարշակ՝ զգուստը Սահակայ սպայտի, որ ի նմին ամբ զախանեցաւ... Արպիսի՛ ճշգրտագնութիւն: Երբունի պատմագիրը չէ մոռնում նորա մահն եւս յիշելու: Իսկ այն որ Խորենացին պատմում է թեոդոսի մասին, թէ՛ «Մեծն թեոդոս ելեալ ի պտերազմ, ի Մեգուլանն հիւանդացեալ մեռաւ...» եւ այլն Խորենացին բառ առ բառ ընդօրինակել է Մաղաղասի պատմութիւնից: ²

Հետեւեալ գլխում (Գ, իւր) Խորենացին ազգապետում է Փաւստոսի պատմութեան հետեւեալ գլխում (Գպր. 2), աւելի արդէն ցոյց տուիք, որ Խորենացու պատմմանը Հայաստանի բաժանման մասին անվարկ է:

Այսպիսով մենք վերջացրինք այն ինչ որ ծրագրել էինք մեր շարադրութեան յառաջաբանում, որ էր Փաւստոս Գպր. Գ, ք — Գպր.

1 Փաւստոս, Եւ, իւր:
 2 «Հանդէս», 1894, փետր. եր. 64:

Ջ, ժգ. եւ խորհնացի Գիրք Գ, 1—խր համեմատութիւնը: Նկատենք նաեւ, որ խորհնացին այնուհետեւ ըստ իւր ճաշակի փոփոխութեանց է ենթարկում Կրիւնն Աբանդելու եւ Ղազար Փարպեցու պատմութիւնը: Բայց գորտ մասին թերեւս յետոյ կարողանանք խօսել:

Յ. ԴԱՂԱՍԵՆՍ



**ԵՂԻՍԱՐԵԹՈՒԳՈՒԼՈՅ ՆՕՅՈՑ
ՀԵՂԻՍԱՐԵԹՈՒԳՈՒԼՈՅ ԳՐԱՆՍԻՐԻՈՒԹՅՈՒՆ
ՈՋԳՈՅՆՈՑ ՎՐՈՑ**

Եղիսարեթուպոսոյ վերին իշխանութիւնը տեսնուեցաւ Սիրվիզի հասարակութեան վրայ նաեւ այն առթիւ, երբ 1772 Գեկտ. 29ին հանգիստէ կուտի մը համար՝ Սիրվիզի Ս. Երորդութեան եղբայրութիւնը հասարակութեանն տուգանքի մը պատժուեցաւ: Եղբայրութիւնն Եղիսարեթուպոսոյ եկեղեցական վերին իշխանութեան գիւնց, որ եւ 1774ին խնդիր քննութեան առաւ, ու այցելու մը իրկեց Սիրվիզ, որպէս զի ճշմարտութիւնը քննէ ու երեւան հասնէ: Ափիայ եկեղեցական իրաւանց յենրով, վերաքննութիւնն իրեն առջեւը բերաւ: Եւ որպէս զի արգարութեամբ կարենայ դատաստան կրել, գեղի բնակիչներէն արժանահաւատ վրաներ հարցաքննեց: Աստը խղճմտանքաւոր վկայութեամբ՝ գրեթէ միաբերան յայտնեցին, թէ թէպէտ այն միջոցին որ եղբայրութիւնն իր գործքին համար ժողոված էր պահութիւն մը հանդիպեցաւ — որն որ զեւ բորբոքին յայտնի չէ — բայց այն պահութիւնն եղբայրութեան մէջ հանդիպած ըլլալով՝ աշխարհական ատենի վերաբերեալ բան չէ: Երկրորդ՝ թէ այսպիսի պատճառով պահութեան մը համար — ինչպէս որ քաղաքաբաշխութեան արձանագրութեանն ալ կը տեսնուի — զեղբայրութիւնը ամբաստանողը, դատաստանի առջեւ ասնողն ու տուգանքը վճարել սուտողը, Յակովբ Աշխ Ստեփանեան եկեղեցական եղած է:

Արդ աս ամէն բան արժանահաւատ վկաներէ իմանալով եւ մէկալ կողմանէ եղբայրութեան կանոններէն գիտնալով, որ եթէ եղբայրութեան մէջ՝ վիճաբանութիւն կամ կռիւ եւ կամ որեւիցէ ուրիշ տեսակ յանցանք կամ պահութիւն մը գործուի՝ անոր նախագահին եւ առաջնորդներուն գործքն է, որ դատեն

պատժապարտը. — եւ եթէ պատժուածը նախութիւն կամ անիրաւութիւն մը տեսնէ անոր մէջ՝ կրնայ Աւագերիցուն ու նոյն խի եպիսկոպոսին բողբոջիլ: —

Անոր համար մենք — կրտէ եկեղեցական վերին ատեններ — տեսնելով որ եղբայրութեան մէջ հանդիպած պահատութեան մը համար քաղաքաբաշխութիւնը եղբայրները տուգանք պատժած է, որով կանոններուն հրամանն անարգելի, սոքի տակ առեր եւ եկեղեցական իշխանութեան դէմ գործեր է. — յանցաւոր կը գտնենք նախ եկեղեցականն որ իր պաշտօնին հակառակ՝ եղբայրներն իրենց դատաստանի շրջանին մէջ չդատելով՝ աշխարհական դատարի ձեռք տուեր է. — Երկրորդ, գատաւորն՝ իր երկու խորհրդականներովն ու քարտուղարովը: Որովհետեւ ասոնք բանի տեղ չդնելով երկու հիմնադիրներուն բողբոջ — որոնք խորհրդէն ելելով բաւականապէս ցուցուցին իրենց ահաճութիւնը, այսու ամենայնիւ — վճիռ բերելու եւ այս կերպով իրաւանց դէմ եղբայրները տուգանք պատժելու համարձակեցան:

Իրերն այսպէս ըլլալով՝ եկեղեցական վերաքննութիւնն այնպէս կը գտնէ, որ նոյն տուգանքն, որ եկեղեցւոյն է, նորէն եկեղեցւոյն դարձուի: Ուստի եւ այս դատաւիճուոյն ուժով կը պարտաւորէ ու կը հրամայէ, որ վերոգրեալ հինգ պահութիւն ընդնեն, այսինքն, Աշխ Յակովբ Ստեփանեան եկեղեցականը, Աշխ Գաւրիթ Վարդանի պիտովը, Աւքանեարու Սպիրիդեան եւ Գրիգոր Վաստիգի խորհրդականներն եւ վերջապէս Մարտիրոս խաչիկեան քարտուղարն, այն 17 Ֆետրին եւ 4 ստակ տուգանքն անպատճառ եւ դարձնեն: Եւ այս գումարը՝ եկեղեցւոյն պէտք եղած զօրաւոր դուռ մը շինելու գործածեն: —

Այսպէս կը գտնէ, կը դատէ, կը հրամայէ ու կը պարտաւորէ եկեղեցական սուրբ վերաքննութիւնը:

Նախորժաց թղթներուն լուսաւորութիւնն եւ իրերե թէ ամբողջացուցիչ մասը կը կազուցանէ յաջորդ՝ պահանջմանց, կամ լաւ եւս գանգատանաց թուղթը. որով գաղափար մը կրնանք կազմել Սիրվիզի այն ատենի յարաբերութեանց վրայ, եւ նաեւ կ'իմանանք, թէ որչափ հեղինակութիւն պէտք է որ ունեցած ըլլայ Եղիսարեթուպոսոյ եկեղեցական առաջնորդութիւնը Սիրվիզի հասարակութեան վրայ: — Աս վերջինիս տիրացուն շատ խեղճութեան մէջ գտնուելով՝ Եղիսարեթուպոսոյ պատգե-